# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 29 >> դեկտեմբեր 2016թ. N 110

ք. Արմավիր

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2016 թվականի նոյեմբերի 21-ի N400C-DB25-D807 հանձնարարականը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի բնակիչ Ս. Ավագյանի կողմից բարձրացված հարցի լիարժեք ուսումնասիրության նպատակով.

***կարգադրում եմ՝***

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ա. Ղուկասյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 2-օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հանձնաժողովին (Ա. Ղուկասյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի ղեկավար Մ. Միսակյանին և դիմումատու Ս. Ավագյանին (համաձայնությամբ):
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

***ՄԱՐԶՊԵՏ՝*** ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2016 թվականի նոյեմբերի ---ի*
*N--- կարգադրության*

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Ղուկասյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ.

*Անդամներ՝*

Գ. Հովհաննիսյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ.

Ա. Դարբինյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ.

Լ. Հարությունյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի գլխավոր մասնագետ.

Մ. Սարիբեկյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ.

Ա. Մարտիրոսյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**